

ՀՏԴ 82.09 (479.243=161.1)

Գրականություն
Կարեն Խանյան

**Բանասիրական գիտությունների թեկնածու,
Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանի
արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ
ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՍԸ ԵՎ ՌՈՒՄԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՆ**

Արցախյան շարժումը լայն արձագանք է գտել ոչ միայն հայ, այլև բազմաթիվ օտար բանաստեղծների երկերում: Այդ առումով չափազանց հետաքրքիր է ռուսական պոեզիան: Շարժման հենց սկզբից Արցախ են ժամանել Մ.Դուդինը, Վ. Կոնոպլովը, Ալ. Բոբրովը, Արշակ Տեր Մարգարյանը և ուրիշներ: Ինչ վերաբերում է Վլ. Պոնոմարյովին, ուշադրության արժանի է նրա և ծառայությունը, և անմիջական մասնակցությունը Արցախյան շարժման թեժ ընթացքին:

Հոդվածի հեղինակը հաճույքով ու երախտագիտության զգացումով վերլուծել ու գնահատել է վերոնշյալ ռուս պոետների թեմային առնչվող ստեղծագործությունները: Հոդվածում ընդգծվում է, որ ռուս գրողները բարձր են գնահատում հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը Ադրբեջանի հայահալած լծի դեմ և նշում, որ այդ շարժումն արդարացի պայքար է՝ հանուն ազատ, անկախ, արժանապատիվ կյանքի

Բանալի բառեր. Արցախյան շարժում, ռուսական պոեզիա, Մ.Դուդին, Վ.Կոնոպլով, Ալ.Բոբրով, Ա.Տեր-Մարգարյան, Վ.Պոնոմարյով, արդարացի պատերազմ, ադրբեջանական ծանր լուծ, հաղթանակ, ազատություն,անկախություն

K. C. Ханян

АРЦАХСКОЕ ДВИЖЕНИЕ И РУССКАЯ ПОЭЗИЯ

Арцахское движение нашло широкий отклик как в армянской поэзии так и в зарубежной. С этой точки зрения интересна русская поэзия. Еще с начала движения Арцах посещали М. Дудин, В.Коноплев, М. Бобров, Аршак Тер- Маргарян и другие. Что касается В. Пономарева, то заслуживает внимания его непосредственное активное участие в Арцахском движении.

Автор статьи с глубоким наслаждением и чувством благодарности, разбирал и оценивал относящиеся к теме произведения вышеуказанных поэтов. В статье подчеркивается, что русские поэты высоко оценивают национально-освободительную борьбу армянского народа, отмечая при этом, что эта борьба за свободную, независимую, достойную жизнь носит справедливый характер.

Ключевые слова: Арцахское движение, русская поэзия, М. Дудин, В. Коноплев. Ал. Бобров. А. Тер-Маргарян, В. Пономарев, справедливая война, Азербайджанское невыносимое ярмо, победа, свобода, независимость.

K.S. Khanyan

ARTSAKH MOVEMENT AND RUSSIAN POETRY

Artsakh movement found wide response not only in Armenian poetry but also in foreign as well. From this point of view, Russian poetry is interesting. Since the beginning of the movement, M. Dudin, V. Konoplev, Al. Bobrov, Arshak Ter-Margaryan and others visited Artsakh. As for V.Ponomarev, his merit and direct active participation in the process of Artsakh movement deserves attention.

The author of the article, with deep pleasure and a sense of gratitude, analyzed and evaluated the works of the poets mentioned above. The article emphasizes that Russian poets highly appreciate the national liberation struggle of the Armenian people, noting that this struggle for a free, independent, dignified life is fair.

Key words: Artsakh movement, Russian poetry, M.Dudin, V.Konoplev, A. Bobrov, A.Ter-Margaryan, fair war, Azerbaijan unbearable yoke, victory, freedom, independence.

Աշխարհապիտուտ հայ ժողովուրդն այս օրերին օրինական հպարտությամբ ու գոհունակությամբ նշում է Արցախյան շարժման 30-րդ տարեդարձը, այն համարելով Ավարայրի ու Մարդարապատի փառավոր շարունակությունը՝ Արցախ աշխարհի ազատագրումն Ադրբեջանի հայահալած լծից: Դժվարին, բայց հերոսական դարերի ընթացքում հայ ժողովուրդը կրկին ու կրկին համոզվեց, որ իր նենգ ու արնախում թշնամին՝ թուրքը, ոչնչով չի փոխվել, ինչպես դիպուկ

բնութագրել է տաղանդավոր բանաստեղծ Վարդան Հակոբյանը. ‘ Գայլը գայլն է նույն՝ բնությունը պատիր՝ գառան մորթու մեջ, թե որջում անտես»:¹

Այդ նենգ ոսոխի դեմ էր, որ Արցախյան պատերազմում միաբանվեց հայ ժողովուրդը՝ հավատարիմ Մեծն Չարենցի իմաստուն կոչին. «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Այդ հավաքական ուժի դրոշակակիրներն ու խորհրդանիշերը դարձան Բեկորը, Ավոն, Ազգալոյսանը և էլի հազարավոր դյուցազուններ, որոնք կյանքի գնով պարզեցին Հայոց եռագույնը փրկված Արցախի ճանապարհին:

Արցախյան պատերազմը միաժամանակ ապացուցեց, որ վտանգի պահին արդարացի գոյամարտում հայ ժողովուրդը մենակ չէ, որ աշխարհում ունի հավատարիմ բարեկամներ, որոնք պատրաստ են հայ զինվորի հետ, որպես զինակից, նետվել մարտի, խիզախել անձնուրաց: Այս տեսակետից հաճույքով կարող ենք նշել, որ քիչ չեն եղել այնպիսի ռուս ազատամարտիկներ, որոնք մասնակցել են Արցախյան գոյամարտին ու հերոսացել: Եվ ոչ միայն այդ: Համոզված կարող ենք բարձրաձայնել, որ Արցախյան շարժումն ու պատերազմն իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել նաև ռուսական արդի պոեզիայում: Այստեղ առաջինը պետք է նշել ակնավոր բանաստեղծ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Միխայիլ Դուդինի անունը: Շարունակելով Մաքսիմ Գորկու, Ալեքսանդր Բլոկի, Վալերի Բրյուսովի և մյուս առաջադեմ մտավորականների ավանդույթը՝ տարիների ընթացքում նա ստեղծել է բանաստեղծական շարքեր՝ նվիրված մեր ժողովրդի պատմական հերոսական անցյալին ու նորօրյա նվաճումներին: Եվ պատահական չէր նրա այցելությունն Արցախ այն ծանր ու ցավալի օրերին, երբ Մումգայիթից հազարավոր հայեր, ազերի-թուրքերի վայրագություններից մազապուրծ, տեղափոխվել էին Ստեփանակերտ:

Վերադառնալով Մոսկվա, նա սովետական իշխանությունների անգործության ու թողտվությունների դեմ իր վրդովմունքը հայտնեց ոչ միայն հրապարակախոսական հոդվածներով, այլև բանաստեղծական կրակոտ տողերով: Մի ամբողջական շարք են կազմում այն գործերը, որոնցում ընդգծվում է ազատագրական պայքարի ելած հայ ժողովրդի արդարացի ընդվզումը ադրբեջանական հայահալած լծի դեմ: Այդ առումով խոսուն օրինակ է նրա «Արյան ճանապարհով դեպի Աստծո ճամփան» գրքում գետնեղված «Արցախի հողում» բանաստեղծությունը, որն արդարամիտ մտավորականի պոետական ճիշ է՝ ուղղված աշխարհին: Բանաստեղծը մարտնչող Արցախը պատկերում է ներքին հպարտությամբ.

Մի կախարդանք է հմայել մարդկանց,
Ե՛վ մոլեգին են, և՛ առանց վախի,
Վրեժով լեցուն, երազով անանց,
Կռիվն է եռում հողում Արցախի:

Կռիվն է եռում, և այն չունի վերջ,
Կռիվ փողոցում, անկյունում շենքի,
Որպես պատասխան՝ «հարևանի» դեմ,
Արցախցիները դիմել են զենքի:²

Բանաստեղծության մեջ հեղինակը շեշտում է, որ Արցախում «սահմաններ չունի ատելությունը», այնտեղ «կռիվը թե՛մ է» այն պատճառով, որ Մումգայիթում ազերիները սուր են բարձրացրել քաղաքը կառուցած հայերի դեմ: Մ. Դուդինը Մումգայիթում կազմակերպված հայկական ջարդերի ղեկավարին անվանում է Սատանա.

Իր ձագերին է զինում Սատանան
Եվ գոչում՝ գործել անգուր ու դաժան,
Գոռում են անվերջ պոետ, պատմաբան.
«Արցախը մերն է՝ մեզնից անբաժան»:³

Բանաստեղծությունն ավարտվում է իմաստուն ընդհանրացմամբ.
Մահաբեր ձեռքը արդ ինչպե՞ս հատես,

¹ Վ. Հակոբյան, Արցախա ծուխ, Լույս՝ հրատ., Ե., 1989, էջ 9

² Մ. Դուդին, Արյան ճանապարհով դեպի Աստծո ճամփան, ռուսերեն, Մ. Պետերբուրգ, Մամուլի պալատ՝ հրատ., 1995, էջ 194: Հոդվածում բերված բանաստեղծական հատվածները թարգմանել է բանաստեղծ Սոկրատ Խանյանը

³ Լույս տեղում, էջ 194

Ինչպե՞ս համոզես ազերուն խոսքով,
Որ ամեն կռիվ թրով սկսվում
Եվ ավարտվում է դառն աղոթքով:¹

Ճիշտ ու տեղին է կռահել ռուս մեծ բանաստեղծը, որ ազերի-թուրքերի կողմից պարտադրված պատերազմն ավարտվելու է իրենց իսկ դառն աղոթքով:

Յուրաքանչյուր արդարացի պատերազմ ունի իր փիլիսոփայությունը: Այն առաջին հերթին բացահայտում է մարդկային գործոնը, ցուցադրում արդարության, կեղծիքի, դաժանության, հերոսականության, մարդասիրության և բնավորության այլ գծեր:

Արցախյան պատերազմը ևս օրինակ է հանդիսանում այդ տեսակետից: Հայտնի են, և աշխարհը գիտի, թե ինչպես տարբեր երկրներից գումար վաստակելու նպատակով առանձին զինվորականներ եկան ու ծառայեցին ադրբեջանական հրոսակների խմբերում՝ Արցախի դեմ: Նրանցից շատ-շատերը ոչնչացվեցին հենց Արցախի սահմանների մոտ, ոմանք էլ փախան մարտադաշտից՝ բացականչելով. Ոչ ոք չի կարող կովել արցախցիների դեմ»: Հենց այդ պատերազմում իրենց մահը գտան ռուս, ուկրաինացի, չեչեն, արաբ և այլ վարձու մարդուկներ, նույնիսկ՝ օդաչուներ:

Սակայն եղել են նաև օտարազգի այնպիսի գործիչներ, որոնք ծառայելով սովետական բանակում, հասկացել են արցախցիների պայքարի իմաստը՝ ազատ և անկախ ապրելու իրավունքը՝ ամեն կերպ օգնելով ու նպաստելով նրանց հաղթանակին: Նման ազնվասիրտ ու արդարամիտ զինվորականներից է բանաստեղծՎլադիմիր Պոնոմարյովը, որի անունը Արցախում հայտնի է շատերին: 1988-1992թթ. նա ծառայել է Ստեփանակերտում տեղաբաշխված 366-րդ սովետական մոտոհրաձգային գնդում: Նրա ծառայության տարիները համընկել են Ղարաբաղյան շարժման ժամանակաշրջանին: Ճիշտ գնահատելով արցախցիների պահանջը, նա ամեն կերպ խրախուսել է հայ ազատամարտիկներին: Հետծառայության տարիներին Վ. Պոնոմարյովը բանաստեղծական աստվածանվեր կարողությունն ընծայեց արցախյան հերոսամարտերի պատկերմանը: Գրեց պոեմներ, բալլադներ, ասքեր, ձոներ և այլ քնարական գործեր: Դրանց մեծ մասն առանձին ժողովածուով հրատարակվել է հայերեն՝ Ս Խանյանի թարգմանությամբ: Ընթերցելով ռուս բանաստեղծի ստեղծագործությունները՝ հաճելի մի զգացում է ջերմացնում սիրտը: Առաջին հերթին նա իրեն համարում է հայ ժողովրդի ռուս որդի, նրա առաջընթացի զինվորայ: Ուշագրավ երևույթ է նրա «Իմ թևավոր Արցախ» քնարական պոեմը՝ նվիրված Արցախի Հանրապետության անկախության 26-րդ տարեդարձին:

Դիմելով Արցախին՝ նա խոստովանում է իր անմնացորդ սերը և անմիջապես ընդգծում.

Դու ազատաբաղձ, գործոյ արդար է,
Քոնն է երկիրդ, օջախդ քոնն է,
Երագդ աստղե, ուղիդ պայքար է,
Հզոր պայքարդ հաղթության տոն է:²

Ոգևորության այս ծփանքը բխում է նրանից, որ, ինչպես բանաստեղծն է հաստատում, ինքը Արցախի ընդվզումի վկան էր ու «Կանգնել էր» նրա «դրոշի ներքո»: Թվարկելով Արցախի պատմական կոթողները, նա նշում է.

Կովկասը, այո, դրախտ է որ կա
Եվ ընթանում է դարավոր հունով,
Նրա գրկի մեջ՝ հավերժ արև կա,
Հայկյան Առանն է՝ Արցախ անունով:³

Ռուս բանաստեղծին հմայում է այն ճշմարտությունը, որ Արցախի «ամեն մի որդի մի սրբած թուր է, Մի նպարտ զինվոր» պայքարի ճամփին: Որդիական հպարտությամբ բանաստեղծը ներկայացնում է Արցախի պատմական անցյալի հերոսական դրվագները, ապա նշում նոր օրերի հաղթարշավը.

Տիեզերական օվկիանոսի մեջ
Հարթում ես անշեղ ճանապարհը քո,

¹ Նույն տեղում, էջ 194

² «Ազատ Արցախ», 28.09.2017, էջ 8

³ Նույն տեղում, էջ 8

Աշխարհի հին ու նոր երկրներում
Արցախ անունդ հնչում է փառքով:¹

Հայ-ռուսական գրական կապերի մերօրյա դրսևորումներից է ճանաչված բանաստեղծ Վիկտոր Կոնոպլովի «Հայաստանը՝ սիրո աղբյուր» ժողովածուն: Նրանում զետեղված երկու տասնյակից ավելի բանաստեղծությունները ռուսերենից թարգմանել է Ս. Խանյանը: Առաջաբանը գրել է գրող-հրապարակախոս, Արցախի հերոս Ջորի Բալայանը, որտեղ ասում է. «Պարզվեց, որ Վիկտոր Կոնոպլովը հասցրել է ծայրեծայր անցնել համարյա ողջ Արցախը: Գտել է բազմաթիվ ընկերներ: Ինչ ասես արժե միայն այն փաստը, որ սիրով ու շռայլորեն նրան թարգմանել է Սոկրատ Խանյանը»:²

Ընթերցելով գիրքը, նկատում ես պատմական արդարության մի հաճելի ընդգծում, այն ճշմարտությունը, որ Արցախը չի կարելի բաժանել Հայաստանից, որ Արցախը նորաթուխ Ադրբեջանին հանձնելը ոչ թե անարդարություն էր, այլ՝ հանցագործություն: Գիրքը բացվում է հետաքրքիր մի խորհրդով՝ «Հայաստանը սիրել ռուսավարի՝ Բանաստեղծը Հայոց աշխարհում տեսնում է մարդկային բնավորության ամենաջերմ ու ազնիվ բարեմասնությունները: Այս մտորումներով ջերմացած, նա իրեն համարում է երկու բարեկամական երկրների զավակ.

Միրիք Արմենիան գուլալված սիրով,
Խաղաղ լուծելով հարցերը բոլոր,
Ողջ աշխարհը թող դառնա բուրաստան,
Քո ծնողներն են Ռուսիա-Հայաստան:³

Ժողովածուում զետեղված բանաստեղծությունները համակում են իրենց անմիջականությամբ: Հեղինակը հմայված ճամփորդում է Հայոց աշխարհի գեղատեսիլ վայրերում, ուղևորվում Արցախ: «Ճամփան» խորագրով երգը դրա լավագույն վկայությունն է, որն սկսվում է այսպես.

Ինձ ծանոթ Հարավի ճամփան
Լեռների լանջերով ծանոթ
Քո գիրկն է բերել, իմ Արցախ,
Դարձել եմ քո որդին՝ քեզ կարոտ:⁴

Բանաստեղծը գոհունակությամբ նշում է, որ Արցախում ունի եղբայր, որի մայրենի լեզվով են խոսում դարավոր վանքերի ու եկեղեցիների գրությունները.

Բառերդ խաչքարի վրա,
Գանձասար-հրաշքիդ պատերին,
Այնպես են խոսում սրտիս հետ,
Որ երբեք թշնամուն չեմ ների:⁵

Ամնացորդ սիրո ու նվիրումի խոստովանություն է «Զրույց» բանաստեղծությունը՝ նվիրված արցախցի ընկերոջը՝ գրող Աշոտ Բեգլարյանին: Այստեղ ևս գրույցն Արցախի հետ է: Զրույցի պահին Արցախն ասես ձեռքը դնում է ժուս պոետի ուսին ու շնչում.

Իմ բարեկամ, նայիր աստղոտ իմ լեռներին,
Նայիր Մոռվ սարին՝ նահապետին իմ քաջ,
Նա վկան է անցած բազում իմ դարերի,
Մարտերի մեջ անթիվ նա չի տեսել նահանջ:
Նա տեսել է՝ ոնց են Քրիստոսի անվամբ
Եղիշեն ու Դադին խոսել Աստծո հետ,
Ոնց է Ամարասը ապրել սրբավայել,
Ոնց է Գանձասարը անցել ուղին անթեք:⁶

Կատարելով պատմական այս անդրադարձը, Արցախը շեշտում է.

¹ Նույն տեղում, էջ 8

² Վ. Կոնոպլով, Հայաստանը՝ սիրո աղբյուր, Երևան, «Ֆիլին» հրատ., 2013, էջ 13

³ Նույն տեղում, էջ 25

⁴ Նույն տեղում, էջ 29

⁵ Նույն տեղում, էջ 29

⁶ Նույն տեղում, էջ 33

Իմ ամեն մի բարձունք սարահարթ է լույսի,
 Կրացի քո առջև հրաշքներն իմ չքնադ,
 Նա կպատմի, թե ինչ գնով եմ ես կյանքում
 Փրկել պատիվն իմ թանկ և օրերը խաղալ:¹

Վ. Կոնոպլյովի բանաստեղծությունները՝ նվիրված Արցախին, զուտ զգացմունքային արտահայտություններ չեն: Դրանք հայ ժողովրդի պատմական անցյալի փիլիսոփայական ընդհանրացումներ են, որոնց շնորհիվ դառնում են գաղափարահուզական պատումներ: Անդրադառնալով Արցախյան լեզենդված անցյալին, բանաստեղծն ընդգծում է. «Տիգրանի թոռն ես, մարդկության ոգին և հույսը նրա»:

Բանաստեղծական գրույցներն Արցախի հետ ասես բացում են օջախի լուսառատ դռները, որտեղ հանդիպում են որդին ու մայրը, որտեղ ռուս բանաստեղծն արդեն իրավունք է վերապահում իրեն Արցախի գիրկը նետվել՝ որպես կարոտավառ զավակ ու բացականչել. «Իմ սեզ Արցախ, քո սարերում ասես գրկումն եմ իմ մոր» և ապա ավելացնում.

Արցախ...
 Քո սուրբ անունը ես հավքիդ երգում լսեցի,
 Արցախ...
 Քո սուրբ անունը դու մկաններիդ հյուսեցիր,
 Արցախ...
 Դու քո ժողովրդի կրծքի տակ ես արևում,
 Արցախ...
 Ոգիդ ծիածանիք գալիք բոլոր դարերում:²

Իր բանաստեղծություններում քնարական հերոս-հեղինակը թափանցում է մարդկային ներաշխարհը՝ ծիածանված հայկական նրբերանգներով: Արդյունքում նրա հայապատումը դառնում է Տիգրանված ծովից ծով երկիր, որի գրկում արդեն հաղթանակած Արցախն է՝ նոր ու արժանապատիվ ընթացքով: Այդ հոգեպարար ծածանումների օրինակներից են «Քո մեջ ոգին է Լույսի, Բարության», «Աստղերի ծունդ գենը հայկական», «Հայաստանը թե չես տեսել, անավարտ է կյանքդ...», «Կարս», «Տիրոջ ջութակը» և այլ գործեր: Վ. Կոնոպլյովը բանաստեղծություններից մեկը վերնագրել է Մրտի շարունակություն՝ որպես բնաբան բերելով մեծանուն Շիրազի հայրենապատումից հետևյալ հատվածը. «Ես մի զավակն եմ հայ ժողովրդի Ու ամենից շատ նրան եմ սիրում»: Ռուս պոետը, շարունակելով Շիրազի խոսքը, նշում է. «Հասակ առած ռուս մոր կաթով, Հայոց աշխարհն եմ սիրում մանկան պես և ապա ավարտում անխախտ համերաշխության պատկերով.

Ռուսաստանը և Հայաստանը հին
 Դրոշ են դարձրել մտերմությունը,
 Ու ես բաց սրտով և հոգով ջերմին
 Օրհներգում եմ մեր եղբայրությունը:³

Այս սրտաբուխ խոստովանության համապատկերին բնական պետք է համարել հետևյալ նորաբնույթ երևույթը: Վ. Կոնոպլյովը, որպես որդիական սեր ու խոնարհում Արցախի առաջ, իր սեփական բանաստեղծությունների շարքում գետեղել է Վ. Հակոբյանի հեղինակած ԼՂՀ պետական հիմնը՝ իր թարգմանությամբ:

Նպատակահարմար ենք գտնում բերել օրհներգից մի հատված.

Ты, отчизна, наш свет,
 Храм любви и в мольбах, и в сердцах,
 Помним мы предков завет,
 Пусть в мире живет Карабах.

Ականավոր գրող Ս. Կապուտիկյանը դեռևս Արցախյան շարժման առաջին օրերին բարձրաձայնել էր, որ Արցախում ապրող և ստեղծագործող բանաստեղծը միայն բանաստեղծ չէ, նա և՛ զինվոր է, և՛ զինակալ, և՛ քաղաքացի: Հիրավի այդպես է: Այդ մասին են խոսում ԼՂՀ գրողների

¹ Նույն տեղում, էջ 33
² Նույն տեղում, էջ 38
³ (Նույն տեղում, էջ 65):

միության (նախագահ՝ Վ. Հակոբյան) կազմակերպած Պոեզիայի միջազգային փառատոներն Արցախում: Պետք է նշել, որ Անդրկովկասում առաջին երկիրն է Արցախը, որտեղ կազմակերպվեց Պոեզիայի միջազգային փառատոն 2012թ. և ապա՝ 2014թ.: Դրանց մասնակցել են ինչպես Մայր Հայաստանից, այնպես էլ Ռուսաստանից, Իտալիայից, Լեհաստանից, Գերմանիայից, Ռումինիայից, Բուլղարիայից, Լիբանանից, Սիրիայից, Վրաստանից հրավիրված անվանի գրողներ ու գործիչներ:

Այդ նշանավոր միջոցառման մասնակիցներին իր ուղերձով ողջունել է ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը: Նա մասամբ ընդձեղել է. Մենք չափազանց կարևորում ենք փառատոնի անցկացումն Արցախում և մեծ սիրով ենք մեր հինավուրց հայկական հողում հյուրընկալում աշխարհի տարբեր երկրներից ժամանած հանրաճանաչ բանաստեղծներին»: ¹ Բարձր գնահատելով հայկական մշակույթը ազգային և համամարդկային նշանակությամբ, վերջում նա ընդգծել է. «ԼՂՀ իշխանությունները բարձր են գնահատում գրողի և գրականության դերը մեր իրականության մեջ և պատրաստակամ են այսուհետ էլ հնարավորինս աջակցել նրա զարգացման գործին: Այս տեսանկյունից ենք հենց կարևորում նման միջոցառումների անցկացումը մեր հանրապետությունում, ինչը լավ հնարավորություն է նաև նոր կապերի հաստատման, Արցախը աշխարհին ավելի ճանաչելի դարձնելու համար»:²

Այնքանով, որքանով մեզ հետաքրքրում է ռուսական պոեզիայում Արցախյան շարժման գեղարվեստական պատկերման ընթացքը, նշենք, որ Արցախում կազմակերպված վերոնշյալ փառատոներին Ռուսաստանից մասնակցել են անվանի բանաստեղծներ Ալեքսանդր Բոբրովը, Արշակ Տեր-Մարգարյանը, Վլադիմիր Պոնոմարյովը, Ալեքսանդր Կնյազևը: Նրանք ոչ միայն արտասանեցին իրենց հայտնի ստեղծագործությունները, այլև նոր բանաստեղծություններ ընծայեցին իրենց համար արդեն նվիրական անուն դարձած Արցախին: Ալեքսանդր Բոբրովը հանդես եկավ նաև հրապարակախոսական հետաքրքիր հոդվածներով: «Հանդիպում լեռներում և բանաստեղծական էջերում, ինչպես նաև Մշունը բարձրադիր այգում՝ հողվածներում ներկայացնելով ԽՍՀՄ նախկին հանրապետություններում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները, ողջունում է ազատ և անկախ ճանապարհն ընտրած Արցախին, խիստ քննադատում Ադրբեյջանի ղեկավարությանը՝ գաղութատիրական, հայատյաց քաղաքականության համար: Նա միաժամանակ արհամարհանքով է խոսում այն մասին, որ Ադրբեյջանում իր անունը մտցրել են սև ցուցակը՝ Արցախ այցելելու պատճառով: Ի հեճուկս ազատ Արցախի թշնամիների, Ալ. Բոբրովը հողվածն ավարտում է սրտաբուխ ջերմությամբ. «Մենք աշնան ամենագեղեցիկ ժամանակ եղանք այստեղ, քայլեցինք լեռնային ճանապարհներով, կարդացինք բանաստեղծություններ, համալսարանում երիտասարդությունը պոեզիայի ընթերցումներ կատարեց... ամենուր սերն էր, համերաշխությունը, մարդկային զգացմունքների պոռթկումը: Պետությունները այրվում են քաղաքագետների կամքով, սահմաններն ու ղեկավարները փոխվում են, իսկ պոետական եղբայրությունը մնում է»:³

Նենց այդ օրերին Արշակ Տեր-Մարգարյանն ստեղծում է «Նամակ Ղարաբաղին» բանաստեղծությունը, որտեղ հիշում է իր պապենական արմատները, որ խրված են արցախյան ավանդական հողում, և ամենուրեք լսում է հոր պատգամը՝ «Պահպանել երկրի ամեն մի քար»: Հոր պատգամը դարձրած արյան կանչ, նա հպարտությամբ բացականչում է.

Ես՝ բանաստեղծս, ժայռի մի բեկոր,
Գալիս եմ հպարտ, դարերի խորքից,
Նետվում եմ գիրկը Հայաստան իմ մոր,
Որպես Արցախի զինվորյալ որդի:⁴

Արշակ Տեր-Մարգարյանին արձագանքում է միջոցառման մասնակից, հայտնի բանաստեղծ Ալեքսանդր Կնյազևը՝ ունկնդիրների ուշադրությանը ներկայացնելով սրտաբուխ իր երգը՝ նվիրված Արցախին.

Գազաթներին սարերի

¹ Բանաստեղծությունն աշխարհի միջօրեականներում, ավանանախ, 2013թ., Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» հրատ., էջ 4

² Նույն տեղում, էջ 4

³ Նույն տեղում, էջ 103

⁴ Նույն տեղում, էջ 160

Ճերմակ ամպերն են փարվել,
Մշուշներից երկնային
ասես աստղեր են թափվում,
Մրտիս ջերմին սարսուռով
նրանց ձեռքերս եմ մեկնել...
Միրող սիրտը կյանքի մեջ
ոչ խաբում է, ոչ խաբվում:¹

Հնարավոր չէ մեկ հողվածում ներկայացնել բոլոր այն ստեղծագործությունները, որ Արցախյան ազգային-ազատագրական պայքարին են նվիրել ռուս բանաստեղծները: Սակայն կարող ենք ընդգծել, որ բարձրարվեստ այդ պոեզիայում ծիածանված է մի լուսավոր գաղափար, որը Վ. Պոնոմարյովի պոեմում հնչում է սրտի խորքից.

Դու այնքան վեհ ես և այնքան մաքուր,
Արդար ես այնքան և այնպես անվախ,
Որ ամեն անգամ քեզ այցի գալիս
Ուզում եմ մնալ քո գրկում, Արցախ:²

Այսպես, այցելություններն Արցախ շարունակվում են, ու գնալով հարստանում է այն պոեզիան, որի էջերում ծածանվում է ազատության և անկախության անբեկանելի ուղին ապահոված Արցախի գեղարվեստական կերպարը:

¹ «Եղիցի լույս», 2014, հ. 3

² «Հայրենիք» թերթ, օրգան Արցախի ժողովրդավարական կուսակցության, 13.02.2013թ.: